Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1056

208.1
S-22

2010

III 13/16

208.1
3-22
45.

ՅԱՒԱԼԻ ԳԻՐՔ ՄԸ.

ՈՐ ՊԱՏԱՀԵՑԱՒ ԲԵԹԼԵՀԵՄ

ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ

ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ

ԱՆՁՆԱՊԱՍՏԱՆ ԼԱՏԻՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵՆԷՆ

ՅԱՌԱՋ ԵԿԱԾ

ՅՈՒՆԻՍ 6

ՏՊԱԳՐԵԱԼ

ՀՐԱՄԱՆԱՒ ՍՈՒՐԲ ԺՈՂՈՎՈՅՆ

198338-59
(1008/359XI)

ՅԵՐՈՒՍԱՂԷՄ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

1861

36480 ա.հ.

2001

Վայ անձին իմում, զի կորեաւ երկիւղած յերկրէ... ամենեքեան արեամբ դատին. իւրաքանչիւր զընկեր նեղելով նեղեն. Միխ. է. 2։

Սակս արդարութեան մարտիր... և մինչև 'ի մահ ճգնեաց վասն արդարութեան. և Ստուած պատերազմի փոխանակ քո. Սիրաք. Դ. 33։

2012

ՅԱՒԱԼԻ ԴԻՊՔ ՄԸ.

Յամանակին պարագայն և դարձուածքները շատ պարզ դուշակել կուտար մեզի որ, օր մը դառն կսկիծ մը պիտի գուժէ Ազգին լսելեացը. այս տեսութիւնը այսմ՝ բացայայտ կերևար, և մեր ընդ աղօտ բողոքները Ազգին իբրև երազ կուգար ու ականջի ետև ձգելով չէր ուզեր լսել, մինչև արդիւնքը տեսնալ կըսպասէր. ոմն թշուառութեանս, Ազգը՝ իր վատահութիւնը մեր վրայէն վերցուցած՝ չուզեր մեր բազմաժամանակեայ փորձառութեամբը ստացած հեռատեսութեանը հաւատալ, և արդիւնքի կըսպասէ. ո՞զորմելի վիճակ, ողբալի զգացմունք։ Ուրեմն մենք ողորմելիքս ո՞ր երթանք, որմ՞ բողոքենք որ ձայներնիս լսելի։

Հայկազեան շքեղ և պատկառելի Ազգը՝ իւր վեհեմ և ամենափառաւոր Տէրութիւնը, փառքը կորսընցուցեալէն վերջը, շատ տեսակ գերութեանց հարըստահարութեանց ենթակայ եղած է. և այն թշուառ գերութիւնները թերթևցուցողը և աղատութիւն կենաստուս շունչ պարգևողը՝ միմիայն Օսմանեան օգոստափառ բարեխնամ Տէրութեան քաղցր բազկայ հովանաւորութիւնը եղած է. որուն համար 'ի խոր սրտէ կը բարեմաղթեմք որ Աստուած հաստատ և անընկրճելի պահէ։ Մեր Հայոց Տէրութիւնը կործանելէն մինչև հիմա՝ Ազգերնիս Իշխաններու և Ազնուապետներու ձեռքով կը կառավարվէր։ Ազգը տե-

սաւ որ այս իշխանները իրենց ծանր պաշտօնը առանց հիմնական կանոնի օրինաւոր չեն կրնար վարել, որոշեց մօտերս որ Սահմանադրութիւն մը հաստատէ. որով կարող ըլլայ Ընդհանուր Ազգին վիճակը բարելաւցունել։ Այս ամենահարկաւոր գործը՝ի սկզբան շատ դժուարութիւններու, արգելքներու պատահեցաւ ալ նէ, վերջապէս Աստուծոյ օրհնեալ կամքը հաստատութիւն գտաւ յուրախութիւն և՝ի կանգնումն տառապեալ Ազգիս։

Այո՛, բերկրութեամբ կը լսենք որ Սահմանադրութիւնը՝ Կ. Պոլսոյ մէջ իր կատարեալ հաստատութիւը առած է. Օսմանեան Բարեխնամ և Օգոստափառ Տերութենէն ազատ արտօնութիւն ունի իւր Ազգին վիճակը բարելաւցունելու և անդորրելու. բայց դժբաղդաբար այս ազատ արտոնութիւնը սուրբ Երուսաղէմայ վրայ գործածուած տեսնալու բաղդը չունեցանք։

Ազգային բարեխնամ կառավարութիւնը կը ջանայ նախ սահմանադրական կանոններ հաստատել ամէն տեղ, բայց ո՞վ սիրելի Ազգ, և Ազգային բարեխորհուրդ կառավարութիւն, Սահմանադրութիւն հաստատելը ալ այսուհետև շատ դիւրին բան է. վասն զի դրեթէ ամէն մարդ իմացաւ ատոր կարևորութիւը և ազգութեան ոգւոյն կենսատու զօրութիւնները. այո՛ ալ վստահութեամբ կըսենք որ այսուհետև կարգ և կանոն սահմանելը դժուարութիւն մը չունի, մինչն սրտի հանգստութիւն, կայութեան բարելաւութիւն և վիճակի անդորրութիւն կը պակսի։ Այն ըսէք մեզի ո՞ր խենդն է որ կանոն և կարգ սահմանելու արգելք կըլլայ առանց բանաւոր պատճառի, ինչու չէք մտածէր որ կանոնը եթէ տեղւոյն չի յարմարի, փոխանակ օգտի վնասներ ալ կը պատճառէ։

Արդ՝ լսեցէք ո՛ Ազգային բարեխնամ կառավարութիւն. մենք սուրբ Երուսաղէմայ Միաբանութիւնս, Կանոնի ընդդիմութիւն ոչ երբած ենք և ոչ ալ միտքէ անցուցած ենք, բայց կը յուսամք որ Կանոնի մը մէջէն՝ տեղւոյն վնասակար, և անօգուտ կետերը վերցուցնել ուզելնիս ընդդիմութիւն չէ. մենք պատրաստ ենք բարեկարգ կանոն մը ըստ արժանոյն սիրով և յօժարութեամբ ընդունել. բայց նախ կաղաչեմք որ մեր վիճակը բարելաւնայ. եթէ կարելի է ամենէն առաջ սա Քրիստոնեայ ազգերէն կրբած սոսկալի հարուածները բժշկեցէք, և ապա Կանոն սահմանելու փութացէք, որուն համար արգելք մը չունիք. ո՛հ ողորմելի վիճակ. հոս կարծես թէ Պարսից Տէրութեան բարբարոսութեան ժամանակներն ենք։ Այ ինչ է մեր քաշածը, ինչո՞ւ կը կենանք հոս և կը նախատուինք օտար ազգերէն. երանի՜ թէ միայն օտարներէն ըլլար. այլ աւա՜ղ, քանզի այս միջոցիս Ազգին կողմէն ալ բարոյապէս քիչ չի վերաւորեցանք ապստամբ, բարբարոս, խարդախ և այլն և այլն վատ և անարժան ածականներով. այս չափ նախատանաց և դառն հարուածոց համբերելէն վերջը՝ պիտի ըլլայ եղեր որ այս օրերս սոսկալի արիւնհեղութիւն մնալ կրենք. և դեռ Ազգային վսեմ կառավարութիւնը կուզէնէ թող Պատրիարքը ուշացունէ։

Տեսէք ո՛ Ազգային վարչութիւն, սուրբ Երուսաղէմայ Միաբանութիւնը՝ իր Ազգին, Սիրելի Ազգին իրաւունքը ձեռքէ չի հանելու համար, իւր անարատ արիւնը այս վերջին անգամ ալ չի խնայեց. լսեցէք՝ կաղաչենք, քաղցրութեամբ ունկնդիր եղէք որ սա հետևեալ սոսկալի դէպքը ճիշտ և մանրամասն կերպով պիտի պատմեմք 'ի լուր հասարակութեան։ Թէպէտ մինչև հիմա մեր Միաբանութիւնը իր ըրած

գործերուն՝ յաղթութիւններուն՝ և ոչ մէկը հրապարակաւ յայտնած էր և ոչ ալ կուզեր յայտնել վախնալով որ ոմանց աչքին պարծանք չի համարվի. բայց հիմա ժամանակը և հարկը կըստիպէ որ ասանկ սնոտի երկիւղները 'ի բաց մերժենք և բարձրաձայն հնչեցուներնք 'ի լուր ամենեցուն սա հետևեալ ահռելի իրողութիւնը կարեկցութիւնին հրաւիրելով մեր վրայ։

Յայտնի է ընդհանուր հասարակութեան, մանաւանդ սուրբ Երուսաղէմ եկող յարգոյ Ազգայնոց, որ հոս՝ Սրբազան տեղիքը Ընկերութեամբ են։ Սուրբ Ծընունդ լատինացիք դուռ մը ունին, ուրիկ մըտնալով մեր Եկեղեցւոյ մէջէն կանցնին սուրբ Ծննդեան այրը իջնալու, (այս դուռը և ճանապարհը՝ ժամանակին մեզի որչափ սուղի նստիլը հարկ չի կայ հիմա պատմել). շատ ժամանակէ 'ի վեր է առանց խըռովութեան սիրով կանցնէին կը դառնային, հիմա այսինքն Յունիս 4 ին չենք գիտեր ինչ դիտաւորութեամբ Լատինաց լուսարարը՝ նոյն իրենց ճամբան ավլած առենը մեր փոխարին (խարին) ծայրը կը վերցունէ և տակն ու վրան կավլէ. այս գործողութիւնը նոյն կեռին չորս անգամ կը կրկնէ։ Լուսարի մեր լուսարարին համբերութիւը հատած՝ կամաց մը կը հարցունէ թէ ինչու մեր տեղը կավլէ. այն ալ բարկացայտ դիմաք կը չեխէ մեր լուսարարին, հասկըցունելով թէ դուք չեք խառնուիր. նոյն օրը Լատինաց թարգմանը մեր հոն տեղի թարգմանին և լուսարարին կըսէ թէ ձեր փոխարը (խարը) վար իջած է պէտք է որ վեր քաշէք. անոնք ալ շատ աղէկ կըսեն. այս խօսքը որ պէտք էր մեր Տեսչին ըսել՝ չեն ըսած։ Այն օրը Տեսուչը վանքին գործով Երուսաղէմ կուգայ, առանց բանին եղերութիւնը դիտնալու. ճա-

նապարհին Լատինաց Թարգմանը պատահելով կըսէ թէ, ձեր (խսիրը) վար իջած է, պէտք է որ վեր քաշէք։ Կը պատասխանէ մեր Տէսուչը թէ, լաւ. Երուսաղէմէն կըդառնամ և այդ գործը կը շըտկեմ։

Լատինացիք կասկածի երթալով որ գուցէ Բեթեշխին գանգատելու գացած է, առանց սպասելու մեր Տեսչին գալատեանը, հետևեալ օրը Յունիս 5. ցորեկին առանձին կիջնան, և այն իրենց դուռնէն չուան կը բռնեն ուղղակի մեր սիւնին վարի քովէն մինչև այրին դուռը նշան կընեն բևեռ գամելով. որ այնչափ մոտէն անցնելու իրաւունք չունին. բանը մեր կողմէն իմացուելով՝ երեկոյեան ժամը 12 ին լուր կուգայ Երուսաղէմ եղելութիւնը պատմելու։

Լատին կղերք՝ երբ կը լսեն Երուսաղէմ լուր գալը, մեր (խսիրին) ծայրն ալ կը կարեն, անմիջապէս ուրիշ մնալ կը խրկուի այս լուրը բերելու։ Երբ որ մենք այս ամէն բռնութեան գործերը լսեցինք, իսկոյն Ժողով կազմեցինք, և որոշուեցաւ որ Ծննդեան Տեսուչ Աթանաս վարդապետ՝ և Եսայի վարդապետ, անմիջապէս երթան և եղելութիւնը ասոյգ տեղեկանան։

Երեկոյին ժամը մէկուկէսներ Երուսաղէմէն ելան և երեքին Բեթլէհէմ հասան. Քրիստոսի Տեառն մեր սուրբ Ծննդեան տեղը երկրպագելէն վերջը՝ այն խառնուած տեղին վրայ դիտողութիւն մը կընեն, և կերթան տեղերնին։ Ուրաւօտ (Յունիս 6) զկնի ժամերգութեան մեր կողմէն լուր կը տրուի Լատինաց վանքը թէ, Երուսաղէմէն եկող վարդապետը՝ և Տեսուչը այցելութեան պիտի գան. հրաման ըլլալէն վերջը կերթան, և զկնի քաղաքավարական տեսութիւն կըսեն թէ. մեր Ծերունի սուրբ Հայրը և բոլոր Միաբանութիւնը սիրով կը ողջունեն զՁեզ. և չէինք յուսար որ, մեր այս անիշխանութեան միջոցին ընդ-

դէմ եղբայրական սիրոյ Ձեր եղբայրութիւնը ա-
սանկ չփոթ մը կը հանէ. մենք վստահ էինք որ դուք
կղգայիք մեր կրած սուգը և կսկիծը, ու յաւակից
կըլլայիք մեզ. բայց դժբաղդաբար կը տեսնանք որ
ընդհակառակն ըլլալով առանց մեր գիտութեանը
և առանց տանտիրոջ ներկայութեանը, դուք ձեզի
առանձին մեր Եկեղեցւոյ մէջ փոփոխութիւն ընե-
լով տեղ կը բաժնէք, և մեր (խսիրն) ալ կըտրեր էք.
ուստի յատկապէս կը խնդրեմք ընդհանուր Միաբա-
նութեամբ որ բարեհաճիք առաջին ձևին մէջ թո-
ղուլ մինչև մեր Գլուխը ընտրվի.

Իրենց Թարգմանը կը պատասխանէ թէ ես ձեր
Թարգմանին և լուսարարին ըսի. — Մեր վարդապետ-
ները կըսեն՝ թէ անոնք ինչ կրնան ընել. — Հրու-
սաղէմայ Ճամբուն վրայ քեզի ալ ըսի. — Մեր Տե-
սուչը կըհարցունէ. ես ինչ պատասխանեցի. — Շատ
աղէկ. դամ նէ կը շրտկէմ ըսիր. — Ուրեմն իմ դառ-
նալուս ինչու չըսպասէցիք. — Մենք կարծեցինք որ
Բ.թեշխին գանգատ ընելու գացիր. — Մեր վարդա-
պետները կը պատասխանեն. մենք եղելութիւնը լը-
սած չէինք, մանաւանդ փորձով աղէկ գիտենք որ
Բ.թեշխին երթալով բանը աւելի կերկարի. մենք
կուզենք որ սասանկ բաներ չըլլան, և եթէ դիպուա-
ծով պատահի ալ նէ, մեր մէջը սիրով լըմնցունենք.
Արդ՝ ըստ որում տանտերը հոս չըլլալով առանց ա-
նոր ներկայութեանը տեղ բաժներ էք, եկէք իմա-
սին կարգի դնենք. — Անոնք ալ կըսեն որ, մենք տեղ
չի բաժնեցինք, այլ՝ մեր սահմանը ուղղեցինք որ ու-
րիշ անգամ չի շեղի. մենք եօթը Տէրութեանց կող-
մէն հոս կեցեր ենք. և անոնց բարիքը կը վայելենք
այս տեղերուն պահպանութեանը համար. ուստի
պիտի ճգնինք մազ մը անգամ չի կորսընցունել.

—Այո՛ այդպէս է պատասխանեցինք, բայց եօթը Տէրութիւն յիշելով ինչ իմացուներ կուզէք. այս-տեղ ամէն Ազգ պարտաւոր է իր իրաւունքը պաշտպանել. ինչպէս որ դուք եօթը Տէրութեան բարիքը կը վայելէք՝ մենք ալ մեր Ազգինը կը վայելենք. հիմա մենք ևս ձեզի չափ իրաւունք չունինք մեր ստացուածքը պաշտպանել։—Այո՛ ըսին իրաւունք ունիք։—Այն Տէրութիւնները՝ զորս կը յիշէք, պարտք և իրաւունք կը ճանչնան, կարգ և կանոն ունին։—Այո՛ ունին և կը ճանչնան։—Հապա անոնց ո՞ր կանոնին մէջ գրուած է թէ, հաստատութե՛ մը տերը հոն չի գտնուած ատեն, երթաք անոր սեփհական ստացուածքին մէջ Ձեր ուզածին պէս նշան ընէք (խսիր) կըտրէք. եթէ այս կըտորը առնենք և Ձեր յիշած Տէրութեանց Հիւպատոսներուն տանինք, ո՞ր մէկը իրաւունք կուտայ այս գործոյն։—Ըսին թէ, մեր ըրածը իրաւունքնիս էր ըրինք։—Բաւ լեցի, այս ըրածնիդ Ձեր իրաւունքէն շատ դուրս է ըսինք. բայց եթէ կարելի է կը խնդրենք այս բանը առանց տարաձայնութեան սիրով լըմնցուներնք. ասանկ դարձն միջոցի մը այսպէս ծանր խնդիր յարուցանելը անպատշաճ է։—Պատասխանեցին թէ, մենք Երուսաղէմ գիր գրեցինք պէտք է որ անոր պատասխանին սպասենք։—Մենք ալ հաճելով ողջունեցինք զիրար, և դարձանք մեր տեղը։

Մէկ ժամէն յետոյ անոնց վանքին փոխանորդը, և մեր վանքին Աւագ Թարգման Ղերսէս վարդապետը եկան Բեթլէհէմ. լուր տուին մեր Տեսչին, ան ալ Եսայի վարդապետին և Ղերսէս վարդապետին հետ վար իջան, մէկզմէկ ողջունելէն վերջը. Լատինաց փոխանորդը հարցուց մեզ թէ ինչ է այս բաներուն պատճառը։—Մենք ալ իրենց միաբանութե՛

հետ ըրած խօսակցութիւններս իրեն ալ կրկնելով, մեր անմեղութիւնը իմացուցինք. նոյն Արժանապատիւ բարեսիրտ անձը ըսաւ որ. — ուրեմն այս բաներին խաղաղութեամբ լմննալուն միջոցը գտանք։ — Պատասխանեցինք թէ արդէն այդ է մեր ալ բաղձանքը. բայց ձեր միաբանութիւնը կուզէ որ իր ը բածը անխախտ մնայ։ — Խաղաղասէր Արժանապատիւ փոխանորդը, սկըսաւ իրենց միաբանութեան, մանաւանդ չարագրգիռ խոստովանահօր հետ երկարօրէն խաղաղութեան և սիրոյ համար խօսել. բայց դժբաղդաբար բոլորովին անօգուտ եղաւ։ — Փոխանորդը, իրենց երկու խոստովանահայր վարդապետներովը մոտեցան մեր քով, և կամքերնիս հարցուցին։ — Մենք ալ ըսինք որ, հարցուցէք ձեր միաբաններուն թէ, այս դուռը բացուելէն մինչև հիմա, ասկէ անցած ատեննիդ ձեզի բան մը ըսող եղա՞ւ. վերէն անցաք, վարէն դարձիք, ծուռ կամ շեղակ քալեցիք, ասանկ խօսք մը եղա՞ծ է։ Մենքն ալ պատասխանեցին թէ, ո՞չ, մէկը բան մը ըսած չունի. բայց այս օրերս (խսիրը) վար իջած ըլլալուն կուզենք մեր իրաւունքը պաշտպանել։ — Մենք ալ ըսինք որ, եթէ (խսիրը) երթալով դալով սրիրթուէր վար իջեր է, վեր քաշելը դժուար բան մը չէ. ուստի Յունաց լուսարարը կանչեցինք, հարցուցինք անոր թէ այս ճամբուն ինչ վնաս եղած է։ — Լաւ որ իրենց ճամբան քիչ մը գոցուած է։ — Շատ աղէկ ըսինք, և (խսիրը) վեր քաշեցինք։ — Լատին կղերը չի հաճեցան բնաւ, և ըսին որ. — մենք որչափ որ չափեր ու կըտրեր ենք, այնչափ սլիտի մնայ։ — Մենք ըսինք չէ՞, մինչև հիմա չեղած բան մը չենք կրնար ընդունիր. դուք զձեզ պարտաւոր կը ճանչնաք եօթը Տէրութեանց. մենք զմեզ պարտաւոր և պատասխա-

նատու կրճանչնանք ամբողջ Ազգի մը. ասոր համար՝ առանց իրաւանց չենք կրնար թողուր որ ուզած-նուդ պէս շարժիք մեր իրաւանց մէջ. պէտք է որ արդար դատաստանով այս գործոյն ստուգութիւնը որոշուի։ — Արժանապատիւ փոխանորդը վերստին խօսեցաւ իրենց հետ շատ ողջանոք. բայց անոնք՝ խոժոռելով բարկացան իրեն վրայ և ըսին որ, դուն Երուսաղէմէն եկար՝ գնա՝ Երուսաղէմ, և մի՛ խառնուիր, մենք ինչ կուզենք կընենք։ Խաղաղասէր փոխանորդը ցաւօք սրտի մեկնեցաւ մեր քովէն. և անոնք մեզի հետ սպառնալեօք վարուիլ սկըսան. իսկ մենք՝ առանց պատասխանելու, նոյն կտրած (խսիրին) կըտորը՝ իր տեղը կարեցինք, և քաշուեցանք տեղերնիս։ Ինչ միջոցէն վերջը մեր տղաքը լուր բերին որ, այն կըտորը դարձեալ կըտրեցին և առին տարին։

Մենք ալ անմիջապէս նոյն չափով և նոյն մեծութիւն (խսիր) մը տարինք ձգեցինք, և ալ հարկ եղաւ որ մէկ քանի հոգի սպասեմք. որպէս զի դարձեալ չի յափշտակեն. մինչև երեկոյեան ժամերգութենէն վերջը բան չի կար. և ահա ժամը 10 ին թափոր մեկ սկըսան դառնալ. իրենցմէ մէկը (խսիրը) ծալեց։ Լոսայի վարդապետը ըսաւ որ, առանց ծալելու ալ կըրնաք անցնիր։ Մէկ ուրիշ մը նորէն ծալեց. Եսայի վարդապետը դարձեալ ըսաւ որ, եղբարք՝ ծալելու հարկ չի կայ, ազատ էք կոխելով անցնիլ։ Մէկ մնալ յանկարծ Լատին կրօնաւոր մը հանդերձին տակէն ահագին փայտ մը հանեց զարնելու սպառնալով. Եսայի վարդապետը ձեռքը դէմ դնելով՝ քաղցրութեամբ կըսէ թէ մենք կըռիւ ընելու չենք եկած։ Լատինականութիւնը հոն ներկայ ըլլալով՝ միջամտութիւն կընէ արդիլելու. Յոպպէցի չարաբարոյ աշխարհական Լատին մը (Մաթեայ Ճելլադ անունով)

Ոտիկանութեան վրայ բարկանալով կըսէ թէ, Փաշայէն կըռիւը արգիլելու հրաման ունիս. դու մէկ դի քաշուէ և վանականայ գործին մի խառնուիր։ Այս միջոցին էր՝ երբ Ղերսէս վարդապետը ծալած (խաչը) կը շարէր, յանկարծ ահագին հարուած մը կիջնայ գլխուն. ուրիշ մը՝ Եսայի վարդապետին վրայ սոսկալի բիրով մը կը յարձակի, և ահա կռիւը ըսկըսաւ։

Մէկ դժբաղդութեանս, Հայք՝ միշտ իրենց հեղութեամբը և խաղաղասիրութեամբը ասանկ, և սոսկէ սոսկալի կռիւներու մէջ անպատրաստ գըտնուած են։ Բայց Հայկական կարիճ արեամբը վառված՝ և արդարութեան զէնքովը զինուորած, առանց վհատելու կը յարձակեն անոնց ձեռքի բիրերը (սափա), և անով կը պատերազմին։ Երուսաղէմէն եկող Վարդապետ, Սարկաւագ, Դպիր, և ուրիշ Միաբաններ՝ կը խառնուին իրար, կը զարնուին և կը զարնեն, բանը կը սաստկանայ. Եսայի վարդապետը՝ վիրաւորուած, երկու տող նամակով կը փութայ զեկուցանել Երուսաղէմ սուրբ Յակոբը։

Մէն, ողորմելի տեսարան. խիստ քարայեալ սիրտ մը անգամ չէր կրնար դիմանար, երբ կը տեսնար կանանց խոստովանահայր ծերունի Ստեփան վարդապետը, որ իր ծերութեանը չինայելով յետի ոտ, գլխաբաց, և բոկ ոտն կառնապարկ դիշերով Երուսաղէմէն Բեթլէհէմ հասնիլ։ Ուտուած ատուր վարդապետը, որ դեռ պէրութ Աւագ Ուրբաթ իրիկվան ընդունած վէրքը, և խորտակված բազուկը չի բժշկած, Աղէն կրաւանց իբրև գերի՝ կը փութայ շտապաւ հասնիլ։ Նախկին թարգման Բաղմաջան Յակոբը վարդապետը՝ և Ատենապետ Սիմէոն վարդապետը՝ երկու անգամ կոյծակի արագութեամբ

Բեթլէհէմ կերթան։ Քանի մը անգամ Եէմ Լատինաց Պատրիարքարանը խաղաղութիւն ընելու համար կը պատգամաւորին նոյն վրդ. պետները. բայց անօգուտ։

Կը բիւրը կը սաստկանայ. վիրաւորեալները մահուան դուռը գետինը կը փռուին՝ արիւնի մէջ ըղալով. Ներսէս վարդապետին գլուխը ահագին ուռոյցք մը կը բարձրանայ։ Յոսայի վարդապետը՝ մահուան վտանգէն ազատելով թեւը և քիթը միայն կը վիրաւորի։ Փիլիպոս վարդապետին գլուխը կը ջախջախվի, թեւը և կողերը կը խորտակվին, և մահուան դուռը հասած կիյնայ՝ անզգայ։ Օհանդեան Սարկաւագ Սարգսին գլուխը և ձեռքը կը վիրաւորվի։ Ուրարակիր Խաչատուրը՝ գլխուն վրայ սոսկալի լայնաբաց վերք մը ընդունելով՝ կարելու կը կարօտի, և ձախ թեւը անշարժելի կը լայ։ Դպիր Գրիգորը՝ երեք վերք գլուխը, երկուք ալ թեւը և ոտքը կը կրէ, ու նորէն անփոյթ կը պատերազմի։ Արճապան Կարապետին գլուխը՝ սաստիկ վիրաւորված, դէմքը արիւն լուայ, անհոգ կը կռուի։ Օհանդեան լուսարար Աւետիսին գլուխը՝ ահռելի վերք կը պսակի։ Սարկաւագ Թորոսին ձեռքի մատթը կը սկրթի. Սարկաւագ Խաչատուրը՝ և Սարկաւագ Յարութիւնը՝ դանակոծ կը լան։

Մէկ աղեռոյց, Եկեղեցւոյ յատակը արեամբ կը ներկուի. և այս ամէն ցաւերուն և կսկիծներուն վրայ՝ ցաւ մնալ կաւելնայ։ Վանքին (եասախճի) Խեյրեթտինը՝ գլխէն և աչքէն չարաչար վիրաւորված՝ մահուան քրտինք կը թափէ. որուն առողջութիւնը Աստուծոյ ամենաճարտար ձեռաց գործն է։ Այս ամէն եղեռնագործութեանց մէջ՝ կտրած աշտանակները, քշոցները, Եկեղեցական զարդուց՝ ցիր և ցան ըլլալը, բոլոր կանդեղներուն փշրուիլը՝ ե-

կար նկարագրել հարկ չէ։ Միայն սա գիտցիք որ՝ բոլոր կրուիւը վերջանալէն զկնի՝ Լատին կղերք կաստաղութիւնին յաղեցուցնելու համար, կանգեղնեբուն ջահերուն հետ պատերազմիլ սկսան. մանաւանդ վերոյ յիշեալ գրգռութեանց առիթ Լատինաց խոստովանահայրը. որք կատաղաբար ջարդեցին թափեցին .... և ելան՝ կարծես թէ յաղթանակաւ մեկնեցան։ Բառասուն հոգիի չափ մարդ, փայտերով և ահագին բիրերով՝ տասնեւհինգ հոգի անդէն և անպատրաստ Հայու վրայ յարձակելով, վիրաւորեցին այնչափ՝ որչափ որ վիրաւորեցան, և յաղթութիւն կը սեպեն, զարմանալի՛ վատութիւն։

Սուրբ Երուսաղէմայ Հայոց Միաբանութեան կրրած այս դառն վիշտերուն, և հեղած անպարտ արեանը վրայ՝ չենք կարծեր որ Ազգին Բարեխնամ Կառավարութիւնը անտարբեր մնալով անոր գործը ուշացունէ .....։

Ամէն մարդ իր տեղը քաշուեցաւ ... այն կետին հրացանապետը (Թիւֆէնքճի պաշին) եկաւ .... ը-ը Բեբա- ը Փաշան կո-գայ։ Հրեք Ազգ դիմաւորեցինք. Վսեմ Փաշան իւր յարգանքը ... մատուցանելէն վերջը՝ մեծ պատուով Լատինաց վանքը գնաց, (խոստանալով որ մեր վանքն ալ կուգայ). Լատինաց վանքէն իջաւ այն կրուիւին տեղը, դիտողութիւն մը ընելով՝ Յունաց վանքը գնաց։ Հոն՝ մեր Թարգման Ղերսէս վարդապետը տեսնալով՝ քովը կանչեց, և բանին ստուգութիւը գիտնալու համար՝ հարցմունքներ ըրաւ։ Այն ալ մի ըստ միոջէ խօսեցաւ. — Թէ ինչպէս գացինք Լատինաց վանքը, և թէ որչափ աղաչեցինք. Ծնունդ ևս մեր ծերունի Յովհաննէս վարդապետը՝ և Յունաց ըլսարարը երթալ անոնց աղաչել պաղատեցնին, և անօգուտ ըլլալը. կրուիւին

ուրկէ սկըսիլը և ուր կայանալը, ինչ դժբաղդ հեռուստ ունենալը՝ ստոյգ ճիշտ եղածին պէս պատմեց։

Վսեմաշուք փաշան, կրկին կանչելով Լատինաց խաղաղատեաց խոստովանահայրը նորէն հարցուց անոր, այն ալ աներկիւղ պատասխանեց թէ, այո՛, ես գրգռեցի վանքերը. կրնամ ես յարուցի, այսչափ շփոթութեան պատճառը ես եղայ. մեր իրաւունքը պաշտպանելու համար։ Վսեմ փաշան իր լռութեամբը պատասխանեց անոր յանդգնութեանը, և հրամայեց որ Հայոց վանքէն ուրիշ մարդ գայ, ուստի Յակոբ վարդապետ՝ Եսայի վարդապետ և Սիմէոն վարդապետ կը ներկայանան և բանին ճըշմարտութիւնը հոն կատարեալ կըստուգուի։

Թէպէտ գոհացուցիչ պատասխան մը չընդունեցինք, բայց վստահ ենք՝ Նորին Վսեմութեան խոհեմ և արդար դատաստանին, որ մեր իրաւունքը պիտի որոշէ անշուշտ։ Վսեմ փաշան՝ բարեհաճեցաւ մարդ խրկելու մեր վանքը որ, վիրաւորները քննէ . . . . ուստի Դահիր էֆէնտին գալով՝ ծանր հիւանդները և դժուարաբոյժ վերքերը նշանակեց. և ապա սկըսան բժիշկները և վիրաբոյժները դարմանել։

Իսկ արդ՝ մենք եղելութիւնը մանրամասնաբար և անկողմնասէր ոգւով պատմելէն վերջը, պիտի աւկնդէտ սպասենք Օրհնեալ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ քաղցր արդեանցը։ Ինչնարին ցաւ կզդայ մեր դըժբաղդ սիրտը, որ մինչև հիմա այդ երկնապարգև Սուրբ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ վրայ ունեցած սիրոյ ջերմ զգացմունքներս հրապարակաւ յայտնելու պատեհութիւնը չունեցանք. կը ցաւինք արդարև, որ մենք ևս անոր առատազեղ շնորհաց մէկ փոքր նշոյլը ընդունելու բարեբաղդութիւն չունեցանք մինչ ցարդ։

Բայց և այնպէս չենք կրնար ուրանար անոր զանազան բարութիւնները՝ զոր կը վայելէ Ազգը, օրհնելով անոր բարեջան և բազմերախտ հիմնադիրները։ Մենք և այս օրհնեալ զգացմանց անտարբեր չենք կրնար կենալ. այո՛, կօրհնենք զայն և կը սիրենք բոլորով սրտիւ։ Կը մաղթենք ջերմ եռանդով՝ որ զայն պարգևող Արարիչը՝ շնորհէ նաև անոր աբդիւնաւոր յառաջադիմութիւն և մշտնջենաւոր յաւիտենական յարատևութիւն։

Յուսալով որ ուրիշ անգամ այս ՎԵՀ ՀԱՅՏԱՏՈՒԹԵԱՆ վրայ մեր Սրբազան պարտքը կատարելու բարեպատեհ առիթը կունենանք.

Ա. այժմ կը հնամ անհամբեր սպասող արդիանցն՝
և օրհնող յառաջադէմ հասպարոնիանն,
Ընդհանուր համակամ Միաբանութիւն
սուրբ Երուսաղէմի։

1893 թ. մարտ։

1056

0028082

1056